Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 8-ի նիստի N 24
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Սույն ծրագիրը մշակվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1.2. մասի, «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1.2. մասի, ինչպես նաև «Արտահանման ծրագրերի Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության արժանացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի 387-Ն որոշման հիման վրա:

2. Ծրագիրը ներկայացնող ռեզիդենտ հարկ վճարող

Ծրագրում ներգրավված հարկ վճարող է հետևյալ ընկերությունը.

№	Անվանումը	Տնօրեն	Հասցե	պետ. գրանցման համար	ՀՎՀՀ	Նշումներ
1	Այ Քոնսթրաքթ ՍՊԸ	Իրինա Դավթյան	ք. Երևան, Երզնկյան 56տ.	264.110.954459	00164921	

3. Շինարարության ոլորտում իրականացվող աշխատանքների տեսակները:

«Այ Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել հետևյալ շինարարական աշխատանքները.

1. էլեկտրահաղորդման կայանների, ենթակայանների և օդային գծերի մոնտաժում, շահագործում,
2. շինարարական աշխատանքներ,
3. շենք/շինությունների ներքին էլեկտրամոնտաժման աշխատանքներ,
4. ռելեական պաշտպանության սարքվածքների մոնտաժում և կարգաբերում,
5. անհրաժեշտության դեպքում նաև շինարարական այլ աշխատանքներ:

4. Աշխատատեղերի քանակի և միջին աշխատավարձի վերաբերյալ տեղեկություն.

Վերոնշյալ շինարարական աշխատանքների իրականացման համար «Այ Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն նախատեսում է աշխատանքի ընդունել հետևյալ մասնագետներին (մասնագետների քանակը, ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, հետագայում կարող է ավելանալ կամ նվազել).

1) տնօրեն (1 հոգի) (300000 դրամ միջին աշխատավարձ),
2) գլխավոր ինժեներ (1 հոգի) (250000 դրամ միջին աշխատավարձ),
3) ֆինանսական տնօրեն (1 հոգի) (250000 դրամ միջին աշխատավարձ),
4) իրավաբան (1 հոգի) (200000 դրամ միջին աշխատավարձ),
5) գլխավոր հաշվապահ (1 հոգի) (200000 դրամ միջին աշխատավարձ),
6) արտադրատեխնիկական բաժնի պետ (1 հոգի) (200000 դրամ միջին աշխատավարձ),
7) էլեկտրասարքավորում մոնտաժող / կարգաբերող / շահագործող (12 հոգի) (100000 դրամ միջին աշխատավարձ մեկ հոգու համար),
8) շինարարական աշխատանքներ իրականացնող աշխատանքների ղեկավար (2 հոգի) (150000 դրամ միջին աշխատավարձ մեկ հոգու համար),
9) բարձր և ցածր լարման մալուխներ մոնտաժող/վերանորոգող (4-5 հոգի) (120000 դրամ միջին աշխատավարձ մեկ հոգու համար),
10) ռելեական պաշտպանության մասնագետ (առնվազն 4 հոգի) (150000 դրամ միջին աշխատավարձ մեկ հոգու համար),
11) մատակարար (1 հոգի) (100000 դրամ միջին աշխատավարձ):